# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Ույուտ Սենթր ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/9 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 1 | Զարգացնող խաղերի հավաքածու, որի մեջ ներառված են թվով 15 տեսակի խաղ, 1. Աղջիկ-տղա, հավաքածու /1 հատ/ Հավաքածուն ներառում է փայտե տիկնիկների զույգ (աղջիկ-տղա), կպչան, տիկնիկների մարմին ամրացվող հագուստի 2 հավաքածու, որը ներառում է 2 տաբատ, 1 շորտ, 1 կիսաշրջազգեստ, 2 վերնազգեստ, 1 զգեստ: Պատրաստված է նրբատախտակից, կպչանից, կտորից, տպագրված թղթից: Չափերը ` բարձրությունը 40սմ է, նրբատախտակի հաստությունը` 0.4մմ: 2. Բուրգ կլոր,ուղղանկյուն, հավաքածու /3 հատ/ Հավաքածուն ներառում է փայտե հիմքի /կլոր կամ ուղղանկյուն/ վրա տեղադրված փայտե ձող, տարբեր գույների և չափերի մասեր / կլոր կամ ուղղանկյուն/: Պատրաստված է փայտից, ջրային հիմքով ներկերից: Չափերը `կլոր բուրգի պատվանդանի տրամագիծը 10սմ է, բարձրությունը` 2սմ: Դետալներից յուրաքանչյուրի հաստությունը 1.5սմ է, գլխիկը` 3սմ: Ընդհանուր բարձրությունը կազմում է 14սմ: Ուղղանկյուն բուրգի պատվանդանի չափսերն են ` 10x4x2սմ, դետալներից յուրաքանչյուրի հաստությունը 2սմ է: Ընդհանուր բարձրությունը 16 սմ է: 3. Հիշողության գունավոր օղակներ, հավաքածու /1 հատ/ Հավաքածուն ներառում է իրար ամրացված երկու բացվող պատվանդաններ, որոնց ուղղահայաց ամրացված են ձողեր: Պատվանդաններից մկը հետևի կողմց փակված է:Հավաքածուն ներառում է նաև 5 գույնի 10 փայտե գունավոր օղակներ: Պատրաստված է փայտից, նրբատախտակից, ջրային հիմքով ներկերից և լաքից: Չափերը` հիմքը` 12x5x3սմ, բարձրությունը 10.5սմ: 4. Երկրաչափական պատկերների արկղ, հավաքածու /1 հատ/ Հավաքածուն ներառում է ուղղանկյուն փայտե արկղ, որի կափարիչի վրա կան երկրաչափական 5 պատկերների (եռանյուն, շեղանկյուն, քառակուսի, ուղղանկյուն, շրջան) տեսքով անցքեր, և |

| | | |
|---|---|---|
| | | փայտե 5 երկրաչափական պատկերներ՝ յուրաքանչյուրից մկական: Պատրաստված է փայտից, լաքից: Չափերը՝ արկղը՝ 16x9x6սմ: 5. Երկրաչափական պատկեներով գնացք հավաքածու /1 հատ/ Հավաքածուն ներառում է 3 վագոնից բաղկացած գնացք՝ պտտվող անիվներով: Վագոնների վրա տեղադրված են տարբեր գույների երկրաչափական պատկերներ՝ եռանկյուն, քառակուսի, ուղղանկյուն,կլոր և բազմանկյուն: Պատրաստված է փայտից, ջրային հիմքով լաքից, ներկից: Չափերը՝ յուրաքանչյուր վագոնի երկարությունը 14սմ է, գնացքի ընդհանուր երկարությունը՝ 42 սմ, բարձրությունը 8.5-9սմ է: 6. Իմ օրը /գնահատման քարտեր, հավաքածու /1 հատ/ Հավաքածուն ներառում է երկէջանի կտորե գրպանիկներով գիրք, որոնցում տեղադրված են 12 գունավոր նկարներով քարտեր, որտեղ պատկերված են օրվա ընթացքում կատարվելիք հիմական գործողությունները ներկայացնող տեսարաններ Պատրաստված է գունավոր տպագրությամբ ստվարաթղթից, կտորից, կպչանից: Չափերը՝ կտորե գիրք՝ 23x16.5սմ: 7. Լոտո, կենդանական աշխարհ, հավաքածու /1 հատ/ Հավաքածուն ներառում է փայտե տուփ, որոնցից յուրաքանչյուրում՝ 6 քարտ ըստ թեմաների (տուն-կենցաղ, կենդանիներ, բնության բարիքներ) և քարտերի վրա տեղադրվող նույն պատկերնորով փոքր քարտեր Պատրաստված է նրբատախտակից, գունավոր տպագրությամբ լամնացված ստվարաթղթից, լաքից: Չափերը՝ տուփը՝ 21.5x15x2.5սմ: 8. Լոտո, բնության բարիքներ, հավաքածու /1 հատ/ Հավաքածուն ներառում է փայտե տուփ, որոնցից յուրաքանչյուրում՝ 6 քարտ ըստ թեմաների (տուն-կենցաղ, կենդանիներ, բնության բարիքներ) և քարտերի վրա տեղադրվող նույն պատկերնորով փոքր քարտեր: Պատրաստված է նրբատախտակից, գունավոր տպագրությամբ լամնացված ստվարաթղթից, լաքից: Չափերը՝ տուփը՝ 21.5x15x2.5սմ: 9. Խաղային հաշվարկ, հավաքածու / 1 հատ/ Հավաքածուն ներառում է կտորե գիրք, որի վրա ամրացված 3 շարք կպչաններին ամրացված են կտորե զատիկի և ծաղիկի 10-ական պատկերներ, 0-10-ը թաղիքե(ֆետր) թվեր: Հետևում ունի գրպանիկ, որում կան գումարման, հանման, հավասարման և մծի կամ փոքրի 2-ական նշաններ: Պատրաստված է կտորից, կպչանից, թաղիքից (ֆետրից): Չափերը՝ կտորե գիրքը 28x60սմ է: 10. Հույզեր- հավաքածու /1 հատ/ Հավաքածուն ներառում է փայտե ուղանկյուն վահանակ, որի վրա պատկերված են տղաների 5 մարմիններ որոնց գլուխը և աջ ձեռքը պատկերող մասը դատարկ է և ունի կլոր փորվածք, ինչպես նաև փորվածքներին համապատասխան 10 շրջանաձև փայտե դետալներ, որոնցից 5-ի վրա պատկերված են տարբեր հույզեր արտահայտող դիմապատկերներ, իսկ մյուս 5-ի վրա պատկերված է տղայի աջ ձեռքը և որևէ իր կամ գործողություն: Պատրաստված է փայտից, ջրային հիմքով լաքից, տպագրված թղթից: Ծափերը՝ վահանակը՝ 50 x 15 x 1 սմ: 11. Հույզեր /գնահատման քարտեր/ /1 հատ/-Հավաքածուն ներառում է երկեջանի կտորե գրպանիկներով գիրք, որոնցում տեղադրված են 8 հույզեր և դրանց առաջացման պխատճառները ներկայացնող նկարներով հավաքածու: Պատրաստված է գունավոր տպագրությամբ ստվարաթղթից, կտորից, կպչանից: Չափերը՝ կտորե գիրք՝ 23x16.5 սմ: 12. Որքան, որտեղ, ինչպիսի /գնահատման քարտեր/ /1 հատ/- |

| | |
|---|---|
| | Հավաքածուն ներառում է 3 խումբ քարտեր, որոնցից յուրաքանչյուրում կա 6 քարտ՝ ըստ թեմաների (տարածական և քանակական, որակական): Պատրաստված է նրբատախտակից, տպագրված լամինացված ստվարաթղթից, ջրային հիմքով լաքից: Չափերը՝ տուփ՝ 11.5x11.5x2.5 սմ: Քարտ՝ 8x8սմ: 13. Պատկերազարդ խորանարդիկներ, հավաքածու /1 հատ/ Հավաքածուն ներառում է փայտե հիմքի վրա 2 շարքով ամրացված 10 ձողեր, որոնց վրա անց են կացվում 50 պատկերազարդ խորանարդիկներ՝ մի կողմում այբուբենի տառը, մյուս կողմում՝ նկար: Պատրաստված է փայտից, տպագրված լամինացված թղթից, ջրային հիմքով լաքից, ալյումինե ձողերից: Չափերը՝ հիմքը 33x13x2 սմ է, բարձրությունը՝ 28 սմ, խորանարդիկները՝ 5x5x2 սմ: 14. Տես և կազմիր նույնը, հավաքածու /1 հատ/ Հավաքածուն ներառում է 18 քարտ՝ յուրաքանչյուր քարտի վրա նկարված են տարբեր երկրաչափական պատկերներ՝ տեղակայված տարբեր ձևերով (կողք, վրա, տակ): Երկրաչափական պատկերների քանակը տարբեր քարտերի վրա տարբեր են: Օգտագործված են 8 տարբեր երկրաչափական պատկերներ՝ շրջան, ուղղանկյուն՝ մեծ և փոքր քառակուսի, եռանկյուն, օվալ, բազմանկյուն և սեղան: Պատրաստված է նրբատախտակից, լամինացված ստվարաթղթից, ջրային հիմքով լաքից: Չափերը՝ տուփը՝ 26.5x15.5x2.5 սմ է, քարտերը՝ 8x8սմ: 15. Տնակ՝ երկրաչափական մարմիններով, հավաքածու /1 հատ/ Հավաքածուն ներառում է նրբատախտակից տնակ, որի վրա առկա 10 փորվածքներում տեղադրվում են տարբեր գույների 4 երկրաչափական մարմիններ՝ բաղկացած 1, 2 և 3 կտորից: Ընդհանուր կտորների քանակը 21 հատ է: Պատրաստված է նրբատախտակից, փայտից, ջրային հիմքով ներկից և լաքից: Չափերը՝ տնակը՝ 27x23x0.7սմ է: Խաղերի փաթեթի հետ տրամադրել խաղերի նկարագրերի և օգտագործման ուղեցույց: Զարգացնող խաղերի տեսքը, նմուշ-օրինակները նախապես համաձայնեցնել հանրակրթության վարչության հետ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

УЮТ СЕНТР ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/9 ниже представляет полное описание предлагаемого им товара.

<table>
<tr><td rowspan="2">Номер лота</td><td>Предлагаемый товар</td></tr>
<tr><td>технические характеристики</td></tr>
<tr><td>1</td><td></td></tr>
</table>